ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 2

2025 թվականի հունվարի 10-ին թվականին կնքված ԵԱ-ՀՄԱԾՁԲ-24/52 գնման պայմանագրի

ք. Երևան «20» հունվարի 2026թ.

«Երևանի Ավտոբուս» ՓԲԸ-ն, ի դեմս տնօրեն՝ Բ. Կիրակոսյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ «Պատվիրատու», մի կողմից, և «Քինգ Մարշալ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն՝ Դ. Հովհաննիսյանի, այսուհետ՝ «Կատարող», մյուս կողմից, երկուսը միասին այսուհետ՝ «Կողմեր», ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ, գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ, հիմք ընդունելով 2025 թվականի հունվարի 10-ին կնքված ԵԱ-ՀՄԱԾՁԲ-24/52 ծառայության մատուցման պետական գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 7.5 կետը, ինչպես նաև ՀՀ կառավարության 04/05/17թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 56-րդ կետի 2)-րդ ենթակետով սահմանված պահանջները և հաշվի առնելով, որ Պատվիրատուի մոտ առաջացել է գնման առարկա հանդիսացող ծառայությունների մատուցման ժամկետի երկարաձգման անհրաժեշտություն, որի արդյունքում պայմանագրի գնի ավելացման համար նախատեսվել են լրացուցիչ ֆինանսական միջոցներ՝ 6,664,800.00 (վեց միլիոն վեց հարյուր վաթսունչորս հազար ութ հարյուր) ՀՀ դրամի չափով, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

## 1. Համաձայնագրի առարկան

Հետագա համագործակցության նպատակով Կողմերը որոշեցին՝

1.1 Պայմանագրի 4.1 կետը շարադրել նոր խմբագրությամբ, հետևյալ կերպ. «4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 86,642,400.00 (ութսունվեց միլիոն վեց հարյուր քառասուներկու հազար չորս հարյուր) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:»:

1.2 Փոփոխել և հաստատել Պայմանագրի Հավելված N 1-ով սահմանված «ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*»-ը նոր խմբագրությամբ, համաձայն՝ սույն համաձայնագրի Հավելված 1-ի:

1.3 Պայամանգրի և Պայմանագրի շրջանակում 20 հունվարի 2025թ. կնքված Համաձայնագիր N 1-ի Հավելված 1-ով ներկայացված «ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*»-ը փոփոխել և հաստատել՝ նոր խմբագրությամբ, համաձայն՝ սույն համաձայնագրի Հավելված 2-ի:

## 2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Համաձայնագրում չնշված՝ Կողմերի Պայմանագրով ստանձնած իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագիրը կազմված 1 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն համաձայնագրի թիվ 1 և թիվ 2 հավելվածները հանդիսանում են սույն համաձայնագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

## 3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| «Երևանի ավտոբուս» ՓԲԸ | «Քինգ Մարշալ» ՍՊԸ |
| ՀՀ, ք. Երևան, Թևոսյան 9 | ՀՀ, մ. Արարատ,Նոր Խարբերդ 10փ, 13/2 |
| «Հայէկոնոմբանկ» ՓԲԸ | «ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ Հ/Հ |
| Հ/Հ 163078035496 | 1570079571760100 |
| ՀՎՀՀ 00875439 | ՀՎՀՀ 00191157 |
| Տնօրեն ---- Բ. Կիրակոսյան | Տնօրեն ---- Դ. Հովհաննիսյան |
| (ստորագրություն) | (ստորագրություն) |
| Կ.Տ. | Կ.Տ. |

Հավելված N 1
2025 թվականի հունվարի 10-ին կնքված
ԵԱ-ՀՄԱԾՁԲ-24/52 ծածկագրով պայմանագրի
«20» հունվարի 2026թ. կնքված
թիվ 2 համաձայնագրի

# ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

| Ծառայության | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| Չ/Հ | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | տեխնիկական բնութագիրը ** | չափման միավորը | ընդհանուր քանակը | ընդհանուր գինը/ՀՀ դրամ | Մատուցման* | |
| | | | | | | | հասցեն | Ժամկետը** |
| 1 | 98111121/501 | Պահնորդական ծառայություններ | Պահպանման ենթակա տարածք է «Երևանի ավտոբուս» ՓԲԸ-ի և վարձակալությամբ իրեն հանձնված և անհատույց օգտագործման տրամադրված ողջ տարածքները հետևյալ հասցեներով.<br>1. Ք. Երևան, Նոր Նորք, Հ. Թևոսյան փ. 9, մակերեսի չափը 4.045569 հա (հավաքակայան)<br>2. Ք. Երևան, Նոր Նորք, Հ. Թևոսյան փ. 12, մակերեսի չափը 0.6 հա (հավաքակայան)<br>3. Ք. Երևան, Մալաթիա, Լենինգրադյան փ. 16, մակերեսի չափը 0.237 հա (հավաքակայան)<br>4. Ք. Երևան, Շենգավիթ, Շիրակի փ. 9, մակերեսի չափը 1.3775 հա (հավաքակայան)<br>5. Ք. Երևան, Նոր Նորք, Մինսկի փ. 5/11, մակերեսի չափը 1.0 հա (պահեստային հատված)<br>1. Պահնորդական ծառայությունն անհրաժեշտ միջոցների ներգրավմամբ՝ պահպանվող օբյեկտների պաշտպանությունն ու անվտանգությունն ապահովող գործողությունների ամբողջություն է, որն իրականացվում է «Մասնավոր պահնորդական գործունեության մասին» օրենքով սահմանված պահնորդների՝ պահպանվող օբյեկտների մշտական և ժամանակավոր գտնվելու վայրերի շենքերի, շինությունների, կառույցների, դրանց հարող տարածքների, տրանսպորտային միջոցների պաշտպանություն իրականացնելու համար նշված օրենքով նախատեսված որակավորում ունեցող, պահնորդական գործունեություն իրականացնող կազմակերպությունում պայմանագրային հիմունքներով աշխատող և կանոնադրական խնդիրներ իրականացնող ֆիզիկական անձանց կողմից: Ընդ որում, ցանկացած փուլում պատվիրատուի պահանջով կատարողը պարտավոր է ներկայացնել ծառայությունում ներգրավված պահնորդների որակավորումը հավաստող փաստաթղթերը: | դրամ | 1 | 86,642,400.00 | «Երևանի ավտոբուս» ՓԲԸ-ի և վարձակալությամբ իրեն հանձնված և անհատույց օգտագործման տրամադրված ողջ տարածքները հետևյալ հասցեներով.<br>1. Ք. Երևան, Նոր Նորք, Հ. Թևոսյան փ. 9, մակերեսի չափը 4.045569 հա (հավաքակայան)<br>2. Ք. Երևան, Նոր Նորք, Հ. Թևոսյան փ. 12, մակերեսի | Համաձայնագրի ուժի մեջ մտնելուց հետո՝ 13 ամիս ժամկետով |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | 2. Պահնորդական ծառայությունը պետք է մատուցվի ծառայության պատասխանատուի, առնվազն 2 ծառայության պատասխանատուի տեղակալների և պահնորդների միջոցով, ովքեր պետք է՝<br>➢ իրականացնեն Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով պահնորդական ծառայություն,<br>➢ շուրջօրյա պարեկության միջոցով կանխարգելեն, կանխեն և կասեցնեն սեփականության կամ օրինական տիրապետման ներքո գտնվող օբյեկտներում իրավախախտումները,<br>➢ ապահովեն պահպանվող տարածքում գտնվող անձանց պատշաճ վարքագիծը,<br>➢ կանխեն նյութական արժեքների չարտոնված տեղաշարժը,<br>➢ անմիջապես արձագանքեն արտակարգ իրավիճակների դեպքում (հրդեհ, երկրաշարժ, ահաբեկչություն և այլն), և այդ մասին անհապաղ տեղեկացնեն Պատվիրատուի կողմից սահմանված անվտանգությամբ զբաղվող ստորաբաժանմանը:<br>➢ պահնորդական ծառայությունը ընդունելիս և հանձնելիս պարտադիր կերպով լրացնեն ընդունման և հանձնման մատյանները, արձանագրելով նաև ծառայության ընթացքում տեղի ունեցած միջադեպերը, իրավախախտումները, պատահարների դեպքերը,<br>➢ ապահովեն պահպանվող օբյեկտներում անցագրային և ներօբյեկտային սահմանված պայմանակարգերի իրականացումը,<br>➢ աշխատակիցների և այցելուների մուտքի/ելքի ժամանակ իրականացնեն անվտանգության անհրաժեշտ միջոցառումներ, ներառյալ՝ գրանցում, հաշվառում, հետևեն տվյալ ժամանակահատվածում օրենքով կամ հրամանով սահմանված ընդհանուր հակահամաճարակային կանոնների պահպանմանը,<br>➢ այցելուներին տրամադրեն մեկանգամյա անցագրային թերթիկներ՝ անհրաժեշտության կամ համապատասխան հրահանգի դեպքում,<br>➢ աշխատեն աշխատանքային պայմանագրի հիման վրա, և նրանց վրա տարածվում են աշխատանքային օրենսդրության պահանջները:<br>➢ ունենան հատուկ պատրաստություն (որակավորում) անցնելը հավաստող փաստաթուղթ,<br>➢ ունենան թիկնապահի կամ պահնորդի որակավորում<br>Պահնորդական գործառույթ իրականացնելու իրավունք չունեն այն անձինք, ովքեր՝<br>1) դատական կարգով ճանաչվել են անգործունակ կամ սահմանափակ գործունակ.<br>2) հոգեկան հիվանդության, հարբեցողության կամ թմրամոլության պատճառով հաշվառման են կանգնած բուժհիմնարկներում.<br>3) դատապարտվել են դիտավորյալ հանցագործության համար, և դատվածությունը սահմանված կարգով մարված կամ հանված չէ.<br>4) խուսափել են ժամկետային պարտադիր զինվորական ծառայությունից:<br>Անվտանգության և պահնորդական ծառայությունն իր մեջ ներառում է «Երևանի ավտոբուս» ՓԲԸ-ի վերոգրյալ շենք շինությունների և դրանց հարակից տարածքի պահպանության կազմակերպումը, առօրյա գործունեության անվտանգության և արտակարգ իրավիճակների կանխումն ու կառավարումը (հրազեկում, ռիսկերի անհապաղ գնահատում, համաչափ միջոցների կիրառում և հետևանքների վերացում), աշխատակիցների անվտանգության ապահովումը: | | | | չափը 0.6 հա (հավաքակայան)<br>3. Ք. Երևան, Մալաթիա, Լենինգրադյան փ. 16, մակերեսի չափը 0.237 հա (հավաքակայան)<br>4. Ք. Երևան, Շենգավիթ, Շիրակի փ. 9, մակերեսի չափը 1.3775 հա (հավաքակայան)<br>5. Ք. Երևան, Նոր Նորք, Մինսկի փ. 5/11, մակերեսի չափը 1.0 հա (պահեստային հատված) | |

Ծառայությունը գլխավորում է Կատարողի կողմից նշանակված անվտանգության ծառայության պետը, ով պարտավոր է կատարել Պատվիրատուի կողմից տրվող օրենքին չհակասող բոլոր հրահանգները՝ կապված «Երևանի ավտոբուս» ՓԲԸ-ի տարածքի անվտանգության և պահպանության հետ:

Ծառայության գործունեության անվտանգ կազմակերպման առաջնահերթություններից է աշխատակիցների անվտանգության ապահովումը:

**Ձեռքբերվող ծառայության ընդհանուր նկարագիրը.**

Պահնորդական ծառայությունն իրականացվելու է շուրջօրյա՝ առանց հանգստյան և տոնական օրերի, ընդ որում տարածքում գտնվող շահագործվող կառույցների և անցակետի հաշվարկով՝

1.Անհրաժեշտ է, որպեսզի ողջ օրվա ընթացքում 24/7 լինեն 3 /երեք/ անվտանգության աշխատակիցներ (բացառությամբ Մինսկի փ. 5/11 հասցեի, որտեղ պետք է լինեն 2/երկու/), որոնցից առնվազն մեկը մշտական լինի հսկիչ անցագրային կետում, մյուս երկուսը՝ իրականացնեն անցագրային կարգ, ըստ պահանջի տարածքում շրջայց կատարեն և իրականացնեն սույն հրավերով սահմանված իրենց վերապահված այլ գործառույթներ, իրականացվի 24-ժամյա ծառայություն՝ այդ թվում շուրջօրյա վերահսկողություն իրականացնել տեսախցիկների միջոցով: Աշխատանքային ժամերին բացի 3 /երեք/ անվտանգության աշխատակիցներից նաև պարտադիր է ծառայության պետի և տեղակալների անմիջական ներգրավվածությունը, ովքեր կկազմակերպեն և կղեկավարեն ծառայությունը:

2. Գիշերային հերթափոխի անվտանգության աշխատակիցներից մեկը լինի հերթափոխի պետ, ով գիշերվա ընթացքում տրանսպորտային միջոցով կկատարի ստուգում-շրջայց:

3. Ծառայություն մատուցող ընկերությունը պետք է ապահովի շրջիկ խմբի միջոցով նվազագույնը 4 անգամ 24 ժամվա ընթացքում շրջայցեր՝ ստուգման նպատակով բոլոր 5 հավաքակայաններում, որոնցից 2-ը պարտադիր ժամը 24:00-06:00-ը ընկած սահմաններում: Շրջայցեր իրականացնելու նպատակով ծառայության մատուցման ողջ ընթացքում պահպանման ենթակա տարածքում ծառայություններ մատուցողը պարտավոր է ապահովել տրանսպորտային միջոցի առկայություն: Տրանսպորտային միջոցի վրա տեսանելի կերպով պետք է պատկերված լինեն կազմակերպության անվանումը, ապրանքային նշանը, կազմակերպության հեռախոսահամարները:

4. Անվտանգության աշխատակիցների հանդերձավորում հատուկ միջոցներով՝ համազգեստ, ռետինե մահակ, լուսարձակ, կապի միջոց (рация):

5. Օբյեկտում պետք է տեղադրված լինի Guard Tour կամ համարժեք համակարգ, որպեսզի վերահսկվի անվտանգության աշխատակիցների շրջայցերը:

6. Աշխատանքային ժամերին ծառայության պետի ներկայություն, ով կկազմակերպի և կղեկավարի ծառայությունը:

Ծառայության մատուցման որակի վերահսկման նպատակով ծառայության մատուցման ընթացքում ծառայություններ մատուցող կազմակերպությունը պետք է կապի միջոցներ (рация) տրամադրի նաև Պատվիրատուին՝ հաճախականությունների ցանկացած փոփոխություն համաձայնեցնելով Պատվիրատուի հետ:

Շահագործվող կառույցների և/կամ անցակետերի ավելացմամբ պայմանավորված պատվիրատուի պահանջով լրացուցիչ աշխատակիցների ներգրավվածության

անհրաժեշտության դեպքում պատվիրատուն պարտավորվում է նախապես տեղեկացնել Կատարողին առաջարկելով կատարել համապատասխան փոփոխություններ պայմանագրում:

| Ծառայության հատկանիշները (բնութագիրը) | |
|---|---|
| Պարտադիր պայմաններ | ➢ Ծառայություն իրականացնող ընկերության պահնորդները պետք է անցած լինեն որակավորման դասընթացներ համապատասխան լիցենզավորված ուսումնական հաստատությունում և հանձնել որակավորման քննություն ՀՀ Ոստիկանության պահնորդների որակավորումը ստուգող հանձնաժողովում ստանալով համապատասխան վկայական:<br>➢ Ցանկալի է, որպեսզի պահնորդները տիրապետեն օտար լեզուների:<br>➢ Պահնորդների համար նախընտրելի տարիքն է 25-55 տարեկան<br>➢ Ծառայությունը իրականացվելու է շուրջօրյա (աշխատակիցների գիշերային և ցերեկային հերթափոխության գրաֆիկը սահմանում է Կատարողը) |
| Անվտանգության և պահնորդական ծառայության իրականացման հիմնական պահանջները | ➢ Կատարող ընկերությունը պարտավոր է ծառայություն մատուցող բոլոր պահնորդներին ապահովել համապատասխան տարբերանշանով (<<Անվտանգություն>> , անգլ.<<Security>>) արտահագուստով (ամառ-աշուն, աշուն-ձմեռ), որը տեսանելի կերպով պարունակելու է կամ նրան փակցվելու է կազմակերպության ապրանքային նշանը, ֆիրմային անվանումը: և օրենքով թույլատրվող հատուկ միջոցներով (ռադիոկապ կոնկրետ շենքում գործող, էլ. շոկ, ռետինե մահակ , ձեռքի էլ. լապտեր և պահպանության ենթակա պահակակետերում ապահովել առաջին բուժ. օգնության արկղիկներով ) և կապի միջոցներով՝ բջջային կապ և ձեռքի դյուրակիր ռադիոկապ: Ռադիոկապի օգտագործման կանոնները և ձևաչափը նախապես համաձայնեցնել «Երևանի ավտոբուս» ՓԲԸ-ի տնօրինության հետ<br>➢ Կատարող կողմը պարտավոր է ցերեկային հերթափոխի ընթացքում իրականացնել հասարակական կարգի վերահսկողություն, կանխել գույքի և սարքավորումների չարտոնված տեղաշարժը, արագ արձագանքել արտակարգ իրավիճակներին (հրդեհ, երկրաշարժ, ահաբեկչություն և այլն):<br>➢ Անվտանգության ծառայության աշխատակիցները պարտավոր են՝<br>ա. կատարել Պատվիրատուի օրինական հրահանգները,<br>բ. ընթացիկ անվտանգությունն ապահովելիս և արտակարգ իրավիճակները կառավարելիս, առաջնորդվել սույն տեխնիկական բնութագրով նախատեսված պահանջներով,<br>գ.ծառայության ներկայանալ սափրված, կոկիկ տեսքով,<br>դ. կատարել հերթափոխի ընդունում և հանձնում՝ համաձայն կատարողի կողմից հաստատված կարգի,<br>ե. նախորդ հերթափոխից տեղեկանալ (իր բացակայության ընթացքում) նոր հրահանգների, միջադեպերի մասին,<br>զ.ժամանակին արձագանքել պահպանվող օբյեկտի ղեկավարության դիտողություններին, առաջարկությունների և անմիջապես տեղեկացնել անվտանգության ծառայության պետին,<br>է.պահպանել ծառայողական գաղտնիքը,<br>ը.պահանջի դեպքում ծառայության մատուցման որակի վերահսկման նպատակով պատվիրատուին տրամադրել պահանջվող անհրաժեշտ տեղեկատվություն, իսկ էլեկտրոնային համակարգերով հսկման դեպքում նաև ապահովել հասանելիություն,<br>թ. հավաքակայանում ավտոբուսները ճիշտ դասավորվելու և կայանելու հարցում օժանդակություն ցուցաբերել վարորդներին:<br>➢ Կատարող կողմը պարտավոր է գիշերային հերթափոխի ընթացքում ապահովել հերթապահ պահնորդների առկայությունը պատվիրատուի կողմից սահմանված անցագրային գոտիներում, ինչպես նաև ապահովել գիշերային հերթափոխի աշխատանքների և օպերատիվ իրավիճակի վերահսկումը և կառավարումը: |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | ➢ Կատարողը պարտավոր է ցերեկային հերթափոխի ընթացքում իրականացնել անցագրային կարգ, անձը հաստատող փաստաթղթերի վավերականության ստուգման կարգ, տրանսպորտային միջոցների, բեռների, ինչպես նաև քաղաքացիների և նրանց գույքի ստուգման և զննման կարգ:<br>➢ Կատարողը նյութական պատասխանատվություն է կրում այն վնասի համար, որը նրա կողմից անհրաժեշտ անվտանգության և պահպանության միջոցառումներ չիրականացնելու հետևանքով հասցվել է Պատվիրատուին նյութական վնաս՝ ունեցվածքի կողոպտման, ոչնչացման, փչացման, հրդեհման կամ այլ հանրորեն վտանգավոր արարքների արդյունքում: Գողության կամ այլ վտանգավոր արարքով պատվիրատուին (հասցված) պատճառված նյութական վնասի չափը որոշելու ժամանակ կատարողը մասնակցում է ապրանքանյութական արժեքների հաշվարկմանը:<br>➢ Կատարողը պետք է ունենա կառավարման կենտրոն, որտեղից պետք է վերահսկի AXSON NEXT կամ համարժեք ահազանգման համակարգի միջոցով:<br>➢ Շրջայցերի ժամանակ ուշադիր զննել տարածքը, կնիքների առկայությունը և կայանված տեխնիկան, պարեկություն իրականացնել պահպանվող օբյեկտի ամբողջ տարածքով, նկատելով անվտանգությանը սպառնացող ցանկացած վտանգ համապատասխան միջոցներ ձեռնարկել դրանց վերացման համար և անմիջապես տեղյակ պահել պատվիրատուին:<br>➢ Ծառայությանն առնչվող և աշխատակազմին վերաբերվող բոլոր հարցերը զեկուցել վերադասին:<br>➢ Պայմանագրի կատարման ընթացքում պահնորդի կողմից պահնորդական ծառայությունների ոչ պատշաճ կատարման կամ չկատարման դեպքում՝ Կատարողը պարտավոր է անհապաղ շտկել առկա խնդիրը, հակառակ դեպքում՝ Պատվիրատուի պահանջով 1 աշխատանքային օրվա ընթացքում փոխարինել ծառայություն իրականացնող պահնորդին այլ պահնորդով:<br>Սույն տեխնիկական բնութագրից բխող բոլոր ծախսերը, ներառյալ հարկերը ներառվելու են պայմանագրի գնի մեջ և իրականացվելու են Կատարողի կողմից: | | | | | |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
«Երևանի ավտոբուս» ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան, Թևոսյան 9
«Հայէկոնոմբանկ» ՓԲԸ
Հ/Հ 163078035496
ՀՎՀՀ 00875439

Տնօրեն՝ ________ Ք. Կիրակոսյան
(ստորագրություն)
Կ.Տ.

**ԿԱՏԱՐՈՂ**
«Քինգ Մարշալ» ՍՊԸ
ՀՀ, մ. Արարատ,Նոր Խարբերդ 10փ, 13/2
«ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ Հ/Հ
1570079571760100
ՀՎՀՀ 00191157

Տնօրեն՝ ________ Դ. Հովհաննիսյան
(ստորագրություն)
Կ.Տ.

*Հավելված N 2*
*2025 թվականի հունվարի 10-ին կնքված*
*ԵԱ-ՀՄԱԾՁԲ-24/52 ծածկագրով պայմանագրի*
*«20» հունիսի 2026թ. կնքված*
*թիվ 2 համաձայնագրի*

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ծառայության | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հ/հ | միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման | ծառայության անվանումը | չ/մ | ընդհանուր քանակը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2025-2026թթ.՝ ըստ ամիսների, այդ թվում՝ | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| | | | | | 2025թ. | | | | | | | | | | | | 2026թ. | | | | | | | | | | | | Ընդհանուր գինը |
| | | | | | I | II | III | IV | V | VI | VII | VIII | IX | X | XI | XII | I | II | III | IV | V | VI | VII | VIII | IX | X | XI | XII | |
| 1 | 98111121 | Պահնորդական ծառայություններ | դրամ | 1 | - | 6,664,800.00 | 13,329,600.00 | 19,994,400.00 | 26,659,200.00 | 33,324,000.00 | 39,988,800.00 | 46,653,600.00 | 53,318,400.00 | 59,983,200.00 | 66,648,000.00 | 73,312,800.00 | 79,977,600.00 | 86,642,400.00 | 86,642,400.00 | 86,642,400.00 | 86,642,400.00 | 86,642,400.00 | 86,642,400.00 | 86,642,400.00 | 86,642,400.00 | 86,642,400.00 | 86,642,400.00 | 86,642,400.00 | 86,642,400.00 |
| **Ընդամենը՝** | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | **86,642,400.00** |

*Գնման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցները նախատեսված են «Երևանի ավտոբուս» ՓԲԸ-ի հրապարակված, փոփոխված և լրացված գնման պլանի համապատասխան անվանատողերով:
Վճարումը կիրականացվի ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա:

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
«Երևանի ավտոբուս» ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան, Թևոսյան 9
«Հայէկոնոմբանկ» ՓԲԸ
Հ/Հ 163078035496
ՀՎՀՀ 00875439
Տնօրեն՝ ---------------- Բ. Կիրակոսյան
(ստորագրություն)
Կ.Տ.

**ԿԱՏԱՐՈՂ**
«Քինգ Մարշալ» ՍՊԸ
ՀՀ, մ. Արարատ,Նոր Խարբերդ 10փ, 13/2
«ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ Հ/Հ
1570079571760100
ՀՎՀՀ 00191157
Տնօրեն՝ ---------------- Դ. Հովհաննիսյան
(ստորագրություն)
Կ.Տ.